

պերուն մէջ . քիչ մը ատենէն ետքը տեսնեմ որ բազէի պէս թռչուն մը եկաւ ասոնց գլխուն վրայէն անցաւ : Են ատեն մէկէն մայրերնին ձայնը փոխեց , վազեց գնաց ձագերուն քովը , սկսաւ զանոնք թերուն տակը առնելուրախանալ :

Հնդկահաւին բարկացող քնութիւն ամենուն յայտնի է . նոր բան մը , և մանաւանդ կարմիր բան մը տեսնելուն պէս , իր սովորական խեղջուկ կերպն ու կեցուածքը կը փոխէ , վիզը կը տնկէ , քիթը կը կախէ , պոչը հովանոցի ձեռվ կը բանայ , ու թերը լարած՝ ինչուան գետին կը քսէ :

Ոովորաթար ութը տասը էգ հընդկահաւին մէկ արու մը կը թողուն , անիկայ ալ երրորդ տարին կը մորթեն . չէ նէ շատ կատաղի կ'ըլլայ : Դար առջի տարիէն կը սկսի հաւկիթ ածել , բայց բուն ածան ըլլալու ատենը երկրորդ ու երրորդ տարին է : Ուուխսը երեսուն օր կը քշէ . ու այնչափ սիրով կը նստի հաւկիթներուն վրան որ եթէ քանի մը օր առաջ կամացուկ մը հաւկիթները փոխես՝ նորէն կը սկսի երկայնմտութք շարունակել թուխսը . ասանկով բոլոր ամառը կրնաս զինքը թուխս նստեցընել , ու հաւկիթները ինչ տեսակ հաւի կամ բադի կամ սագի հաւկիթ ըլլան՝ փոյթը չէ . միայն աս կայ որ բոլոր ամառը այնպէս անշարժ կենալով՝ առողջութիւնը կը կորսընցընէ ու բարակցաւ կ'ըլլայ : Լայելու է որ թուխսին տեղը կամ բոյնը առանձին տեղ մը ըլլայ ծածուկ . չէ նէ արու հնդկահաւն որ տեսնէ՝ կը բարկանայ ու բոլոր հաւկիթները կը կոտրտէ :

Հնդկահաւին ձագերը պաղէն ու խոնաւութենէն խիստ շուտ կը վնասուին , անոր համար ամէն երկիր դիւրին չէ զանոնք պահէն ու մէծցընելը . առջի բերան իրենց տրուելու կերակուրը պիտի ըլլայ եղի՛ կամ կարոս՝ ջարդած՝ ու ալիւրով և հաւկը-

թիղեղնուցով խառնած : Արկու ամսական որ ըլլան , ու կտուցներուն վրայի կատարքը և գլխուն վրայի կոնճմատած մաշկը սկսի կարմրնալ՝ վտանգաւոր ատեննին է . ան վտանգը անցընելէն ետքը առողջ կը մնան , ու երթալով կ'ուժովան :

ԱՏՎԱԲԱԾԽՈՒԹԻՒՆ

“ Ար մոլորակէ մը գոհուիլ :

Գրեթէ ամբողջ տարի մըն է որ լուսական ըսուած մոլորակը գտնուեր էր , ինչպէս որ օրագրիս մէջ ալ յիշեցինք ² . անոր գիւտն ալ պարզ գիպուածով եղած չէր , հապա շատ աստղաբաշխական քննութիւններէն ետքը գտնուեր էր : Բայց աս տարի սեպտեմբերի 23^ի գտնուած նոր մոլորակը իրաւցընէ մարդուս հրաշալի հանձարոյն մեծամեծնշաններէն մէկն է : Շատ ատենէ՝ ի վեր աստղաբաշխ ները դիտած էին որ լուսական ըսուած մոլորակը (որ մէկալ ամէն մոլորակներէն աւելի հեռու է արևէն՝ ու 1781^ի հերշէլ աստղաբաշխը գտած է) իր շրջանին մէջ այլայլութիւններ կ'երևցընէ , ու պատճառը յայտնի չէ : Աեւտոնեան զրութեամբ՝ մէկալ մոլորակներուն այսպիսի այլայլութիւններուն պատճառը՝ իրենց իրարու հետունեցած ձգողութիւնն է . բայց լուրանոսին քովերը չկար մէկ մոլորակ մը որ նոյն օրէնքներով կարենար անոր վրայ այնպիսի զգալի ազգեցութիւն մը ընել : Լըվէոիէ ³ անունով Փարիզու քաջ ու բարակամիտ աստղաբաշխը անթիւ հաշիւներով ու անխոնջ աշխատանքով վերջապէս մակարեւեց թէ լուրանոսէն շատ հեռու մէկ ուրիշ մոլորակ մըն ալ կայ անշուշտ՝ որ անոր հետ ունեցած ձգողութեամբը ան այլայլութիւններուն

պատճառ կ'ըլլայ : Ա ակաբերութիւնը բաւական չէ . այնչափ խորունկ ու Ճիշդ հաշիւներով հաստատեց աս իր կարծիքն որ ինչուան ան մոլորակին մեծութիւնը , շրջանը , զանգուածը , ու արևեն ունեցած հեռաւորութիւն ալ որոշեց : Ինկէ ետքը Պիերլինի հըռչակաւոր Լալէ աստղաբաշխին գրեց իր կարծիքը , ու խնդրեց որ անիկայ իրեն նրբամիտ ու Ճարտար հաշիւներովն ու գիտողութեամբը փնտուէ ան մոլորակը իր ցըցուցած տեղուանքը : Լալէն ալ սեպտեմբերի 23^ն գիշերը Պիերլինի դիտարանէն դիտեց՝ գտաւ Լ ըվէռիկէին գուշակած մոլորակը , որ ինչուան հիմա մէկ երկնացուցի մը վրայ ալ նշանակած չէր : Ո՞էկէն 'ի մէկ լուրոպայի ուրիշ դիտարաններէն ալ տեսնուեցաւ ան նոր մոլորակը , ու ամէնքն ալ մեծամեծ գովկեստներ գրեցին Լ ըվէռիկէին ու Լալէին . և Գաղղիոյ Ճեմարանը մօտերս երկուքին ալ Լ եգէոն պատուոյ ըսուած ասպետութեան նշանը տուաւ :

ԶՈՒՄՐՃԱՎԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լ էլու ՀԵՒԹԻՆԱԾԵՆ ՔՐԻՅԱՆՔՆԵՐԸ :

Ա ԵՇՆ Փեղերիկոս սովորութիւն ունի եղեր որ իրեն թիկնապահներուն կարգը նոր զինուոր մը գալուն պէս՝ աս իրեք հարցմունքը կ'ընէ եղեր անոր . “ Տարիքդ քանի է . Ո՞րչափ ատեն է որ իմ ծառայութեանս մէջ ես . Ա տակդ ու հագուստդ ու զածիդ պէս են , : Գաղղիացի երիտասարդին մէկն ալ կը փափաքի թագաւորին թիկնապահներուն մէջը մտնել , բայց գերմաներէն չգիտեր եղեր . ուստի զօրապետը կ'ըսէ իրեն թէ “ Կիտնաս որ թագաւորը քեզի աս իրեք հարցմունքը կ'ընէ . նայէ որ պատասխանները սերտես , հարցընե-

լուն պէս՝ կը զուրցես , ամօթով չես մնար , : Դաղղիացին շուտ մը կը սորվի ան իրեք պատասխանը գերմաներէն , ու երկրորդ որը թագաւորին առջեւ կ'ելլէ : Կը սկսի թագաւորը երկրորդ հարցմունքէն , “ Ո՞րչափ ատեն է որ իմ ծառայութեանս մէջ ես , : Կ'ըսէ : “ Քսաննումէկ տարի , կ'ըսէ զինուորը : Ծագաւորը կը նայի կտրՃին կերպարանքը որ հազիւ թէ քսան տարեկան է , կը զարմանայ թէ ինչպէս կրնայ ըլլալ որ քսաննումէկ տարի զինուորութիւն ըրած ըլլայ . ուստի կը հարցընէ թէ “ Տարիքդ քանի՞ է : — Ո՞էկ տարի մըն է՝ հրամանոցդ շնորհքովը , : Կ'ըսէ զինուորը : Փեղերիկոս առջինէն ալ աւելի զարմացած՝ կը զուրցէ բարձր ձայնով թէ “ Լամ գուն խելքդ կորսընցուցեր ես՝ կամես : — Լորկուքն ալ , տէր արքայ , կ'ըսէ զինուորը : Ի՞ն ատեն կը տաքնայ թագաւորն ու կ'ըսէ . “ Ա առաջին անգամն է որ խենթ սեպուեցայ զինուորներուս առջեւ , : Օ ինուորը կը նայի որ գերմաներէն խօսելու ինչ պաշար որ ունէր՝ լմնցաւ , լուռ կը կենայ . երբոր կը գառնայ թագաւորը նորէն կը հարցընէ իրեն թէ ինչ ըսել կ'ուզես այդպիսի խօսքերով , զինուորը կը դառնայ գաղղիարէն պատասխան կուտայ թէ “ Ա մենակն գերմաներէն չեմ գիտեր , : Ի՞ն ատեն կը ծիծաղի թագաւորն ու կը խրատէ զինքն որ իր տէրութեան լեզուն սորվի , ու իրեն պարտքերը լաւ կատարէ :

Ա ԵԿԱ որ իր լեզուն ծուռումուռ կը խօսի . մի կարծեր թէ օտար լեզուն լաւ խօսի . իսկ թէ յանկարծ խօսի նէ , վրան մեծ համարում մը մի առներ :